ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ

ARMSWISSBANK

*Private & Investment Banking*



# Բանկի գործադիր տնօրենի ուղերձը

## Message of the executive director

2012 թվականին Բանկը շարունակել է կայուն զարգանալ և նոր ձեռքբերումներ արձանագրել՝ ՀՀ բանկային համակարգում ամրապնդելով իր մրցակցային դիրքերը: Չնայած բանկային համակարգում առկա մրցակցությանը, ինչը հատկապես արտահայտվում է վարկային ռեսուրսների առաջարկի ավելացմամբ, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների կողմից առաջարկվող ծրագրերի շրջանակներում, Բանկը տարին ամփոփել է գործունեության հիմնական ցուցանիշների աճով:

2012թ. Բանկն ապահովել է մատուցվող ծառայությունների թե՛ որակական և թե՛ քանակական աճ, արդյունավետորեն մշակվել և ներդրվել են նոր ծառայություններ ու պրոդուկտներ:

2012թ. Բանկը շարունակել է համագործակցությունը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետև՝ ՎԶԵԲ) հետ՝ կնքված ՓՄՁ վարկավորման և Առևտրի ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում: Նշեմ, որ հաշվի առնելով Բանկի ֆինանսական ցուցանիշները, առևտրի ֆինանսավորման բնագավառում հարուստ աշխատանքային փորձը, հաճախորդներին առևտրի ֆինանսավորման գործիքների տրամադրման ակտիվությունը և աշխատակիցների պրոֆեսիոնալիզմը, ՎԶԵԲ-ը 2012թ. ընթացքում երեք անգամ ավելացրեց Բանկին հատկացված սկզբնական սահմանաչափը (3.0 մլն ԱՄՆ դոլար)՝ տարվա վերջին այն հասցնելով մինչև 9.0 մլն ԱՄՆ դոլարի:

Հաշվի առնելով 2012թ. Բանկի և ՎԶԵԲ-ի միջև համագործակցության արդյունքում արձանագրված հաջողությունները՝ առևտրի ֆինանսավորման սահմանաչափեր ստանալու ուղղությամբ առաջիկայում կշարունակվեն աշխատանքներ տարվել նաև այլ միջազգային ֆինանսական կառույցների հետ:

In 2012 the Bank continued to grow steadily accomplishing new achievements and strengthening competitive position in the RA banking sector. Despite the increased competition in the banking sector, which is most evident in the credit market with more funds being offered including those available under programs of international organizations, the Bank managed to report increase in its year-end key performance indicators.

In 2012 the Bank continued to increase the quality and quantity of the provided services developing and offering its clients new products and services.

In 2012 the Bank continued cooperation with the European Bank for Reconstruction and Development (hereinafter, EBRD) under the SME lending and the Trade Facilitation programs. Taking into consideration the Bank's financial performance, extensive experience in trade finance, active disbursements of trade finance facilities and professionalism of the staff, EBRD increased the initial limit of the TFP line (USD 3 million) by three times during the year amounting up to USD 9 million at year end.

Taking into consideration the Bank's successful cooperation with EBRD in 2012, activities will be continued towards receiving trade finance limits also from other international financial institutions.

The Bank also distinguishes Purchase order financing and Pre-export financing facilities as relatively new directions of lending which are important instruments for the Bank to achieve its strategic goals (offering full range of services to corporate clients) and are well demanded new services in the Armenian banking market.

2012 was also successful for the Bank in terms of project financing. Taking into account the Bank's experience in this field and the availability of funds from international organizations, the Bank considers project financing as a strategic development direction.

Կորպորատիվ հաճախորդներին այլընտրանքային ֆինանսավորման համեմատաբար նոր ուղղություններից հարկ է նշել «Գնման պատվերի ֆինանսավորում» և «Արտահանման խթանման» ծրագրերը: Վերջիններս Բանկի ռազմավարական խնդիրների լուծման, մասնավորապես՝ կորպորատիվ հաճախորդների բազմակողմանի սպասարկման գործիքակազմի էական տարրերից են և նոր՝ բավականին պահանջված ծառայություններ են հայկական բանկային շուկայում:

2012թ. Բանկի համար հաջող էր նաև նախագծերի ֆինանսավորման առումով: Հաշվի առնելով տվյալ ոլորտում Բանկի կուտակած փորձը և միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորման հնարավորությունները՝ Բանկը դիտարկում է այն որպես հեռանկարային զարգացման ուղղություն:

Բանկը շարունակել է ակտիվ աշխատանքներ իրականացնել հիփոթեքային վարկավորման ծավալների ընդլայնման ուղղությամբ՝ ինչպես Ազգային հիփոթեքային ընկերության ծրագրի շրջանակներում, այնպես էլ սեփական ռեսուրսներով: 2012թ. Բանկը մշակել և իր հաճախորդներին ներկայացրել է հիփոթեքային նոր պրոդուկտ՝ «Հիփոթեքային վարկի նախահաստատում», որը հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում ստանալ անշարժ գույքի ձեռք բերման վարկ՝ նախապես սահմանված առավելագույն գումարի շրջանակներում:

Բանկը շարունակել է համագործակցությունը FCI միջազգային ֆակտորինգային ընկերության և Գերմանահայկական հիմնադրամի «Վերականգնվող էներգիայի զարգացում» վարկային ծրագրի շրջանակներում:

Բանկը նախատեսում է ընդլայնել իր գործընկերների շրջանակը՝ շեշտադրելով միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ ինչպես առկա գործընկերների մասով համագործակցության ընդլայնման, այնպես էլ նոր միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատման ու զարգացման ուղղությամբ: Ներկայումս բանակցային փուլում են գտնվում մի շարք միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցություն սկսելու աշխատանքները:

In 2012 the Bank continued activities towards increasing its mortgage loans portfolio financing both under the National Mortgage Company's program and from its own resources. In 2012 the Bank developed and introduced to its clients a new mortgage product, the pre approval of mortgage loans, which allows receiving loans within the scope of the pre approved limit in a short period of time for purchase of real estate.

The Bank continued cooperation with Factors Chain International (FCI) as well as with the German Armenian fund within the scope of SME lending and "Renewable Energy Development" programs.

The Bank plans to expand the scope of its partners emphasizing cooperation with international organizations through involvement in new programs of the current partners

> *2012թ. Բանկի համար հաջող էր նախագծերի ֆինանսավորման առումով նաև*
>
> *2012 was also successful for the Bank in terms of project financing*

as well as establishing and developing further cooperation with new international organizations. Opportunities of starting cooperation with a number of international organizations are currently being negotiated.

In 2012 the Bank continued providing high quality financial services including both traditional services and tailor made alternative solutions to the increasing base of clients.

In 2012 the Bank gave its clients the opportunity of opening online bank accounts and brokerage operations (via the Bank's website).

In 2012 the Bank also had significant achievements in the sphere of investment activity.

The Bank maintained its status of agent in the market of treasury bonds and acted as a market maker of the securities issued by its clients.

In the end of 2012 the Bank acted as the underwriter for "Artsakh HEK" OJSC's first issue of nominal coupon bonds in total nominal amount of USD 6.0 million. The placement was

# 6

Հաճախորդների թվաքանակի աճին զուգահեռ Բանկը 2012թ. շարունակել է հաճախորդների բարձրորակ սպասարկումը՝ նրանց առաջարկելով ինչպես ավանդական, այնպես էլ հաճախորդների կարիքների բավարարմանն ուղղված այլընտրանքային ծառայություններ:

2012թ. Բանկն իր հաճախորդներին էլեկտրոնային եղանակով (Բանկի տնային էջի միջոցով) բանկային հաշիվներ բացելու և բրոքերային ծառայություններից օգտվելու հնարավորություն է ընձեռել:



2012թ. Բանկն էական ձեռքբերումներ է ունեցել նաև ներդրումային գործունեության բնագավառում:

Բանկը պահպանել է պետական պարտատոմսերի շուկայի Գործակալի կարգավիճակը և հանդես է գալիս որպես իր հաճախորդների կողմից թողարկ-ված արժեթղթերի մարքեթ-մեյքեր:

2012թ. վերջին Բանկը հանդես է եկել որպես «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ կողմից թողարկվող 6.0 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով անվանական արժեկտրոնային պարտատոմսերի առաջին թողարկման կազմակերպիչ և տեղաբաշխող: Տեղաբաշխումն ավարտվել է 2013թ. հունվարին:

Ներդրումային գործառնությունների մասով Բանկը շարունակելու է մատուցել իր կողմից արդեն իսկ մշակված ծառայությունները, ինչպես նաև իրականացնել նոր պրոդուկտների մշակման և զարգացման գծով աշխատանքներ: Գործունեության ակտիվացման հնարավոր ուղղություններից կարելի է առանձնացնել բրոքերային ծառայությունները, մասնավորապես՝ միջազգային շուկաներում արժեթղթերի մարժինալ գործարքները, ինչպես նաև մետաղական հաշիվներով և ոսկով գործառ-նություններով ծառայությունները: Այս ամենը հնարավորություն է տալիս Բանկին՝ իրականացնել իր միջնաժամկետ ծրագրային նպատակները:

Բանկի անձնակազմի անունից իմ խորին շնորհա-կալությունն եմ հայտնում մեր Հաճախորդներին, Գործընկերներին, Խորհրդին և Բաժնետիրոջը՝ Բանկին ցուցաբերած վստահության և աջակցու-թյան, ինչպես նաև փոխշահավետ համագործակցու-թյան համար:

Ցանկանում եմ իմ վստահությունն ու երախտա-գիտությունը հայտնել նաև «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ի անձնակազմին՝ նվիրված աշխատանքի համար:

completed in January 2013.

Regarding investment operations, the Bank will continue to offer its clients the existing range of services and also work towards developing and promoting new products. Operations are likely to intensify in the spheres of brokerage services, particularly marginal trade operations in international markets as well as operations with metal accounts and gold, etc.

All the above mentioned steps lead the Bank to meeting its mid-term strategic plans.

On behalf of ARMSWISSBANK Staff I would like to extend our grateful acknowledgement to our Clients, Partners, Board and the Shareholder for the faith in our Bank, support and mutually beneficial cooperation.

I would also like to express my trust and profound gratitude to the Bank's personnel for their devoted work.

**Գևորգ Մաչանյան**
Տնօրինության նախագահ
Գործադիր տնօրեն

**Gevorg Machanyan**
Chairman of the Management Board
Executive Director





© Biayna Mahari



***Էրեբունի-Երևանը աշխարհի ամենահին քաղաքներից է: Այն հիմնադրվել է Հռոմից 29 տարի առաջ և այժմ 2794 տարեկան է: Քաղաքը կառուցվել է Արգիշտի Առաջին արքայի կողմից: 1918 թվականի մայիսի 28-ին քաղաքը հռչակվեց Հայաստանի առաջին հանրապետության մայրաքաղաք: Իսկ երկու տարի անց այն դարձավ Խորհրդային Հայաստանի մայրաքաղաքը:***

*Erebuni-Yerevan is one of the oldest towns in the world. It was founded 29 years earlier than Rome and is 2794 years old now. The town was built by Argishti I. On May 28, 1918, the town was declared to be the capital of the Democratic Republic of Armenia. 2 years later it became the capital of the Armenian Soviet Socialist Republic.*

10

# Բանկի մրցակցային դիրքը ՀՀ բանկային համակարգում

# The Bank's competitive position in the Armenian banking system

Հաշվի առնելով բանկային համակարգում առկա մրցակցությունը՝ Բանկը մշտապես իրականացնում է մրցակցային դիրքի վերլուծություններ, շուկայում գործող ծառայությունների պայմանների և տոկոսադրույքների ուսումնասիրություններ, որոնց արդյունքում առաջարկվում են մրցունակ ավանդային և վարկային տոկոսադրույքներ: 2012թ. Բանկը շարունակել է կայուն զարգանալ և նոր ձեռքբերումներ արձանագրել՝ ՀՀ բանկային համակարգում ամրապնդելով իր մրցակցային դիրքերը:

Բանկն իր գործունեության ընթացքում առանձնակի ձգտում չի ցուցաբերել իր քանակական ցուցանիշներով բանկային համակարգում առաջատար դիրքեր զբաղեցնելու ուղղությամբ: Փոխարենը, Բանկը մշտապես ձգտել է առաջատար դիրքեր գրավել և այդ դիրքերը պահպանել բարձրակարգ բանկային ծառայությունների որակական հատկանիշների ապահովմամբ:

Բանկն իր ուրույն տեղն է զբաղեցնում և առաջատար դիրքերում է որոշակի ծառայությունների մատուցմամբ և ներդրմամբ, մասնավորապես՝

- Ֆակտորինգ
- Գնման պատվերի ֆինանսավորում
- Մետաղական հաշիվներով գործառնություններ
- Ոսկու ձուլակտորների առք ու վաճառք
- Պարտատոմսերի առաջնային տեղաբաշխում, ինչպես նաև երկրորդային շուկայում գործառնություններ
- Կորպորատիվ հաճախորդների համար համալիր լուծումներ

With consideration to the increasing competition in the banking system the Bank constantly studies its competitive position, the terms of products and services present in the market and suggests competitive deposit and loan interest rates. In 2012 the Bank continued to grow steadily accomplishing new achievements and strengthening competitive position in the RA banking sector.

Throughout its activity the Bank did not specifically aim to occupying leading positions in the banking system in terms of quantitative indicators. Instead, the Bank has always strived to occupy and maintain leading positions in terms of qualitative indicators by providing superior banking services.

The Bank occupies unique and leading positions in terms of introducing and rendering certain services, particularly:

- Factoring
- Purchase order financing
- Operations with unallocated metal accounts
- Buy/sell operations with gold bullions
- Initial allocation of bonds, as well as operations in the secondary market
- Full range of services for corporate clients

Given the factors of service quality, professionalism of the staff, application of new technologies as well as facilities matching international standards, the range and volumes of the Bank’s services continue to expand.

Throughout its activity the Bank has been a leader in terms of the amounts of securities underwritings. Overall 10 issuances have been organized within 6 years.

Բանկի կողմից մատուցվող ծառայությունների տեսականին և ծավալները շարունակում են ընդլայնվել հետևյալ գործոնների առկայության պարագայում՝ սպասարկման բարձր որակ, աշխատակիցների պրոֆեսիոնալիզմ, նոր տեխնոլոգիաների կիրառում, տարածքի՝ միջազգային չափանիշներին համապատասխանող պայմաններ: Իր գործունեության ընթացքում Բանկն առաջատար է հանդիսացել իր կողմից կազմակերպված արժեթղթերի թողարկումների ծավալներով: Ընդհանուր առմամբ 6 տարվա ընթացքում իրականացվել է թվով 10 թողարկում: Բանկի գործունեության արդյունավետության մասին են վկայում շահութաբերության ցուցանիշները, որոնց գծով Բանկը զբաղեցրել է առաջատար դիրքեր ՀՀ բանկային համակարգում: Համաձայն ԱՐՄԻՆՖՈ տեղեկատվական գործակալության տվյալների, ակտիվների շահութաբերությամբ Բանկը զբաղեցրել է առաջին տեղը ՀՀ բանկային համակարգում: Նշված ցուցանիշը Բանկի համար կազմել է 4.13%՝ գերազանցելով բանկային համակարգի միջին ցուցանիշը ավելի քան 2 անգամ:

The Bank occupies leading positions in the RA banking system in terms of profitability ratios which indicates the efficiency of the Bank's operations. Particularly, according to the ARMINFO information agency, the Bank occupied the first position among RA banks by return on assets. The said indicator for the Bank was 4.13% exceeding the average banking indicator by more than twice.



**Բանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում՝ ըստ ակտիվների շահութաբերության ցուցանիշի (ROA)**
**The Bank's position in the RA banking system by return on assets**



2012թ. վերջի դրությամբ Բանկի շահութաբերությունը ըստ կապիտալի կազմել է 13.97%, որը զգալի բարձր է ՀՀ բանկային համակարգի համանման ցուցանիշների միջինից:

As of year end 2012 the Bank's return on equity ratio was 13.97% which considerably exceeds the average return on equity indicator of RA banks.

**Բանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում՝ ըստ կապիտալի շահութաբերության ցուցանիշի (ROE)**
**The Bank's position in the RA banking system by return on equity**




Նշենք նաև, որ մեկ աշխատակցին բաժին ընկնող շահույթի մեծությամբ Բանկը երկրորդ տեղն է զբաղեցնում ՀՀ բանկային համակարգում (2012թ. վերջի դրությամբ Բանկի համապատասխան ցուցանիշը կազմել է 20.92 մլն ՀՀ դրամ, իսկ միջին բանկային ցուցանիշը՝ 4.96 մլն ՀՀ դրամ):

It is also worth mentioning that the Bank occupies the second position in the RA banking system by profits per employee (as of year end 2012 this indicator was AMD 20.92 million for the Bank and the banking average was AMD 4.96 million).

Բանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում՝
ըստ մեկ աշխատողին ընկնող շահույթի (հազ. ՀՀ դրամ)

**The Bank's position in the RA banking system by profits per employee (thousand AMD)**




Ինչպես երևում է գրաֆիկներից, բանկային համակարգի միջինի համեմատությամբ Բանկը գրեթե մշտապես ապահովել է բավականին բարձր շահութաբերության ցուցանիշներ, ինչը վկայում է գործունեության բավականին բարձր արդյունավետության մասին:

Բանկը, շարունակելով իր ակտիվ ներդրումային գործունեությունը, տարվա ընթացքում արժեթղթերի պորտֆելի մեծությամբ բանկային համակարգում զբաղեցրել է երրորդ տեղը, ինչը կազմում է բանկային համակարգի արժեթղթերում ընդհանուր ներդրումների 11%-ը և Բանկի ակտիվների 32%-ը:

The presented graphs depict that the Bank has almost always provided rather high profitability ratios compared to the banking averages indicating the quite high efficiency of the Bank's operations.

Continuing active investment operations the Bank occupied the 3rd position in the RA banking system by the amount of securities portfolio ensuring 11% share in the total investment portoflio of RA banks and 32% of the Bank's assets.

# 14



**Բանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում՝**
**ըստ պետական արժեթղթերում կատարված ներդրումների (մլն ՀՀ դրամ)**
**The Bank’s position in the RA banking system by investments in government securities (thousand AMD)**





© Suren Manvelyan



*Խորհրդային Միության ամբողջ տարածքում Երևանը դարձավ առաջին քաղաքը, որի համար ստեղծվեց գլխավոր հատակագիծ: Հատակագծի հեղինակն էր Ալեքսանդր Թամանյանը, ում նախագիծն ընդունվեց 1924 թվականին: Ի սկզբանե քաղաքը նախատեսված էր 150.000 բնակչի համար, բայց անցնում էին տարիներ, և քաղաքն ընդլայնվում էր: Այժմ Երևանի բնակչությունը կազմում է մոտավորապես 1.125.000 մարդ:*

*Yerevan was the first city in the USSR for which a general plan was created. The author of the plan was Alexander Tamanian, whose project was approved in 1924. At first, the city was designed for 150.000 residents, but the time was running and the city was growing correspondingly. Today the population of Yerevan is around 1.125.000 people.*

# Բանկի գործունեության հիմնական ուղղությունները

## Main activities of the bank

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, շարունակում է գործունեություն ծավալել երեք հիմնական ուղղություններով և մասնագիտանալ կորպորատիվ, ներդրումային և անհատական (private) բանկային ծառայությունների մատուցման ոլորտում` իր առջև ունենալով Հայաստանում այդ ուղղությամբ առաջատար բանկ դառնալու տեսլականը:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն առանձնանում է կորպորատիվ հաճախորդներին առաջարկվող համալիր ծառայությունների լայն տեսականիով` սկսած ավանդական բանկային ծառայություններից (վճարահաշվարկային, վարկային ծառայություններ, դեպոզիտային ճկուն սխեմաներ, առևտրի ֆինանսավորում և այլն) մինչև ոչ ավանդական բանկային ծառայություններ (այլընտրանքային ֆինանսավորում, ֆակտորինգ, ֆորվարդ, սվոփ, օպցիոն, ֆինանսական խորհրդատվություն և այլն):

Առևտրի ֆինանսավորումը, ֆակտորինգային ծառայությունները, ինչպես նաև ապրանքային ֆինանսական ֆյուչերսները հիմնականում ուղղված են արտահանման և ներմուծման ոլորտում գործող հաճախորդներին` նպատակ ունենալով պահպանել նրանց մրցունակությունը տեղական, և միջազգային շուկաներում, ընձեռելով նոր շուկաներ ներթափանցելու հնարավորություն: 2008թ.-ից Բանկն անդամակցում է Factors Chain International-ին (Միջազգային ֆակտորինգային ասոցիացիա), ինչը հնարավորություն է տալիս Բանկին միջազգային ֆակտորինգային գործառնություններ իրականացնել ավելի քան 70 երկրում գտնվող շուրջ 270 անդամ-բանկերի միջոցով: Բանկի ռազմավարական ուղղություններից է միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային

Remaining loyal to its policy, ARMSWISSBANK continues to evolve activities in three main directions, namely, corporate, investment and private banking, with the vision to become a leading bank in Armenia in those areas.

ARMSWISSBANK is distinguished by the wide range of services provided to its corporate clients including both traditional (payment and settlement services, lending services, flexible deposit schemes, trade finance, etc.) and non-traditional services (alternative financing, factoring, forward, swap, option, financial consulting, etc.)

Trade finance, factoring as well as commodity and financial futures are mainly designed for clients engaged in importing and exporting activities to maintain their competitiveness in local and international markets and facilitate new markets penetration. Since 2008 the Bank is a member of FCI (Factors Chain International), which enables the Bank to emplement international factoring operations in more than 70 countries via a network of about 270 member banks.

Investment banking attuned to international standards is one of the Bank's main strategic directions. The Bank offers its customers a wide range of investment instruments, such as shares of American, European and Russian companies and investment funds, depositary receipts, government and corporate bonds, commodity futures as well as repo and marginal operations with foreign securities, transactions with gold including unallocated metal accounts, etc.

The Bank's clients can improve risk diversification and manage their cash flows more efficiently through derivatives.

In order to cope with new market challenges and successfully devise investment projects, ARMSWISSBANK offers underwriting services to its corporate clients.

բանկային ծառայությունների մատուցումը: Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսականի՝ ամերիկյան, եվրոպական, ռուսական ընկերությունների ու ներդրումային հիմնադրամների բաժնետոմսեր, դեպոզիտար ստացականներ, պետական ու կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ֆյուչերսներ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո և մարժինալ գործառնություններ, կանխիկ ու անկանխիկ ոսկով գործառնություններ և այլն:

Ֆինանսավորման ածանցյալ գործիքների միջոցով Բանկի հաճախորդներն առավել արդյունավետ կարող են իրականացնել իրենց ռիսկերի դիվերսիֆիկացումը, ինչպես նաև դրամական հոսքերի կառավարումը: Ժամանակակից շուկաների նորանոր մարտահրավերներին դիմագրավելու, ինչպես նաև ներդրումային նախագծեր մշակելու և իրագործելու համար ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն իր կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է արժեթղթերի թողարկման ու տեղաբաշխման կազմակերպման ծառայություններ:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը, լինելով առաջատարներից ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում և հանդիսանալով ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի Գործակալ, իրականացնում է շուկա ստեղծողի (մարքեթ-մեյքեր) գործառույթներ՝ նպաստելով արժեթղթերի հայաստանյան շուկայի իրացվելիության բարձրացմանը: ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը շարունակում է իր ակտիվ մասնակցությունը ՀՀ արժեթղթերի շուկայի ֆինանսական միջնորդության ոլորտի օրենսդրական դաշտի բարեփոխումներին վերաբերող նախաձեռնություններին:

Բանկն իր հաճախորդներին առաջարկում է անհատականացված (tailor-made) պրոդուկտների փաթեթ՝ արժեթղթերի անհատական, կոլեկտիվ և այլ տիպի պորտֆելների ձևավորում, բրոքերային ու պահառուական ծառայություններ, ներդրումային գործառնությունների վերաբերյալ խորհրդատվության մատուցում: Ճկունությունը հաճախորդների հետ աշխատելիս կարևոր գործոն է Բանկի առաջանցիկ զարգացման ապահովման և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» բրենդի առաջմղման գործում:

As one of the leaders in the Armenian government securities market and a government securities agent of RA, ARMSWISSBANK acts as a market maker to enhance liquidity of the Armenian securities market. ARMSWISSBANK continues active participations to initiatives regarding legal reforms of financial intermediation in the RA securities market.

ARMSWISSBANK offers its clients tailor-made services, including development of individual, corporate and other types of securities portfolios, brokerage, custodial and consulting services. The flexibility while working with the clients is one of the key factors for the progressive development of the Bank and promotion of “ARMSWISSBANK” brand. ARMSWISSBANK develops long-term partner relations with its clients based on close and mutually beneficial cooperation. The Bank’s skilled and experienced personnel identifies each client’s needs and offers high quality financial solutions.





© Suren Manvelyan




*Հյուսիսային պողոտան Երևանի ամենաերիտասարդ փողոցներից է: Դրա պաշտոնական բացումը կայացել է 2007 թվականին: Թամանյանի հատակագծով՝ քաղաքի կենտրոնը ձևավորված է երեք հրապարակների շուրջ (Հանրապետության, Ազատության և Շահումյանի), որոնք կապված են միմյանց: Հյուսիսային պողոտան հենց այն երակն է, որը կապում է Ազատության հրապարակը Հանրապետության հրապարակին:*

*Northern Avenue is one of the youngest streets of Yerevan. Its official opening ceremony was held in 2007. According to Tamanian’s plan, the city centre is organized around three squares (Republic, Freedom and Shahumyan), which are interconnected. Northern Avenue is the vein that connects Freedom Square to Republic Square.*

# Վարկավորում
# Lending

## Ընդհանուր վիճակագրություն

2012թ.-ի ընթացքում Բանկը, չնայած ֆինանսական շուկայում առկա սուր մրցակցությանը, ակտիվ գործունեություն է ծավալել վարկավորման բնագավառում, շարունակելով զարգացնել նախորդ տարիներին ձեռք բերած հաջողությունները:

2012թ.-ի վերջի դրությամբ Բանկի վարկային պորտֆելը նախորդ նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 18.7%-ով, իսկ վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտները՝ 29.7%-ով: 2012թ. Բանկը տրամադրել է 20.3 մլրդ ՀՀ դրամի վարկեր:

## Summary statistics

In spite of the presence of strong competition in the financial market, the Bank was rather active in the sphere of lending in 2012 continuing to further develop the achievments of the previous years.

In 2012 the loan portfolio of the Bank grew by about 18.7% and interest income earned thereon increased by 29.7%. In 2012 the Bank made loan disbursements for the amount of AMD 20.3 billion.

**Վարկային պորտֆելի և վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտների դինամիկան (մլն ՀՀ դրամով)**
**Dynamics of the loan portfolio and interest income on lending activities (million AMD)**





# ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
## Grigor Hovhannisyan

Գործադիր տնօրենի տեղակալ - Վարկավորման դեպարտամենտի տնօրեն

Deputy Executive Director - Director of Lending Department

## Վարկային ռիսկի կառավարում

Վարկային ռիսկի կառավարման նպատակով Բանկը մշտապես աշխատանքներ է տանում վարկային պորտֆելի՝ ըստ աշխարհագրական դիրքի և տնտեսության ճյուղերի բազմազանեցման (դիվերսիֆիկացիա) ուղղությամբ՝ բացառելով առանձին ճյուղի կենտրոնացումը: Ստորև ներկայացված է վարկային պորտֆելի բաշխվածությունը՝ ըստ տնտեսության ճյուղերի:

## Credit risk management

To manage credit risk the Bank always performs activities towards the diversification of the loan portfolio by geographical location and sectors of the economy. This allowed to ensure the stable growth rate of the loan portfolio and its return, constraining centralization within separate sectors.

| ***Տնտեսության ճյուղեր***<br>*Sectors of the economy* | ***Տեսակարար կշիռը վարկային պորտֆելում***<br>*Share in the lending portfolio* | | | |
|---|---|---|---|---|
| | **2009** | **2010** | **2011** | **2012** |
| Էներգետիկա<br>Energy | 12,20% | 15,69% | 20,24% | 19,54% |
| Առևտուր<br>Trade | 11,24% | 15,75% | 15,08% | 15,20% |
| Մշակող արդյունաբերություն<br>Processing industry | 6,05% | 12,21% | 13,81% | 13,95% |
| Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն<br>Agriculture, forestry and fishing | 4,38% | 11,21% | 8,55% | 11,06% |
| Հիփոթեքային վարկեր<br>Mortgage loans | 10,43% | 8,89% | 10,19% | 11,56% |
| Սպառողական վարկեր<br>Consumer loans | 5,48% | 9,78% | 8,55% | 7,08% |
| Տնտեսության այլ ճյուղեր<br>Other sectors of the economy | 50,22% | 26,47% | 23,58% | 21,61% |

Հարկ է նշել, որ էլեկտրաէներգիայի, մասնավորապես, վերականգնվող էներգիայի արտադրության ոլորտում վարկային ներդրումների մեծ տեսակարար կշիռը պայմանավորված է Բանկի՝ տվյալ բնագավառում կատարած բազմամյա լուրջ աշխատանքով, վարկերի վերադարձելիության համեմատաբար ցածր ռիսկայնությամբ, ռիսկերի կառավարման վերահսկելիությամբ և այլ հանգամանքներով: Բանկն ակտիվ մասնակցություն է հանդես բերում այս ասպարեզում գործող բոլոր հնարավոր վարկային ծրագրերին, միջազգային և տեղական բիզնես գործընթացներին ու սեմինարներին, ինչպես

It is worth mentioning, that the significant share of investments in the energy sector, particularly in the renewable energy sector, is due to the intensive activities of many years implemented by the Bank in this sphere, relatively low loan repayment risk, supervision over risk management and other factors. The Bank actively participates in all available lending programs in this sphere, international and local business events and seminars and periodically implements activities towards training professionals and mitigating risks through cooperation with independant specialists/consultants.

During the year the Bank continued activities to increase the

նաև պարբերաբար աշխատանքներ է տանում այս ուղղությամբ արհեստավարժ մասնագետների պատրաստման ու վերապատրաստման և անկախ փորձագետների/խորհրդատուների հետ համագործակցության միջոցով հնարավոր ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:

Տարվա ընթացքում Բանկը շարունակել է միջոցառումներ իրականացնել ինչպես սեփական բիզնես-գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու, այնպես էլ վարկային ռիսկը կանխարգելելու և զսպելու ուղղությամբ:

## *Մասնակցություն միջազգային և տեղական վարկային ծրագրերին*

Բանկը կարևորում է տեղական և միջազգային վարկատու կազմակերպությունների հետ համագործակցությունը, քանի որ այն բացի կայուն և մատչելի միջոցների աղբյուր հանդիսանալուց, նպաստում է նաև Բանկի աշխատողների մասնագիտական պատրաստվածության և ամենատարբեր ներդրողների և գործընկերների շրջանում Բանկի հեղինակության բարձրացմանը: Այս տեսանկյունից Բանկի ռազմավարական գործընկերներն են՝

- Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (ՎԶԵԲ), որի հետ գործընկերության հիմքերը դրվել են դեռևս 2010թ.-ից կնքված է 5 մլն ԱՄՆ դոլարի պայմանագիր՝ Փոքր և Միջին Ձեռնարկությունների (ՓՄՁ) վարկավորման և 3 մլն ԱՄՆ դոլարի համաձայնագիր՝ Առևտրի ֆինանսավորման ծրագրերի (ԱՖԾ) իրականացման նպատակով: 2011թ. Բանկը գրեթե ամբողջությամբ տեղաբաշխել է ստացված միջոցները: 2012թ., հաշվի առնելով Բանկի արդյունավետ աշխատանքը առևտրի ֆինանսավորման ոլորտում, ՎԶԵԲ-ը սահմանաչափը ավելացրեց՝ հասցնելով այն մինչև 9 մլն ԱՄՆ դոլարի: 2013թ. Բանկն ակնկալում է խորացնել ու ընդլայնել համագործակցությունն ինչպես ներգրավված միջոցների ավելացման ուղղությամբ, այնպես էլ համատեղ նոր ծրագրեր իրականացնելու գործում:

- Բանկը համագործակցում է KfW զարգացման

efficiency of its own lending procedure and mitigate credit risks.

## *Participation in local and international lending programs*

The Bank highly prioritizes cooperation with international lending organizations since besides being a source of stable, long term and less expensive funds such cooperation also enhances the professionalism of the Bank's staff and increases the Bank's reputation among investors and partners. The Bank's strategic partners from this perspective are the following:

- European Bank for Reconstruction and Development (EBRD), with which the Bank started cooperation since 2010 signing an agreements of Small and Medium Enterprises (SME) financing for USD 5 million and Trade Facilitation Program (TFP) for USD 3 million. In 2011 the Bank almost entirely disbursed the received funds. In 2012 taking into consideration the Bank's efficiency of trade financing operations, EBRD increased the limit up to USD 9 million. In 2013 the Bank anticipates further expansion of cooperation both through attracting more funds and implementation of new joint projects.

- Project Management Unit of the German Armenian Fund with which the Bank cooperates within the scope of KfW "Renewable energy development" program which the Bank started in 2006 and is one of the leaders in the RA banking system. The Bank anticipates significant growth for the above mentioned program throughout the coming years.

- The German "Atlantic Foraitierungs AG" company, with which the Bank started coopertion in 2011 within the scope of "Trade financing program" allowing to offer its clients attractive medium term loans.

- Taking into considertaion the effective cooperation with the Bank in 2012 the Russian Promsvyazbank approved a limit for trade financing operations.

- Mortgage lending can be distinguished as a relatively new financing direction which the Bank actually started since 2010. Membership to the mortgage loans refinancing program of

Բանկի վարկային ծրագրերը կառավարող գերմանահայկական հիմնադրամի (GAF) հետ «Վերականգնվող էներգետիկայի զարգացման ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում, որում Բանկը ներգրավված է դեռևս 2006թ.՝ հանդիսանում է ՀՀ բանկային համակարգի ընդգծված առաջատարներից: Նշված ծրագրով Բանկն ակնկալում է էական աճ արձանագրել մոտակա տարիներին:

- Գերմանական Ատլանտիկ ֆորֆեյթինգ Էյ Ջի կազմակերպությունը, որի հետ համագործակցության հիմքը դրվեց 2011թ.-ին «Առևտրի ֆինանսավորման ծրագրի» շրջանակներում և հաճախորդներին գրավիչ պայմաններով միջնաժամկետ վարկեր տրամադրելու հնարավորություն ընձեռվեց:

- Ռուսական Պրոմսվյազբանկը 2012թ., հաշվի առնելով Բանկի հետ արդյունավետ համագործակցությունը, առևտրի ֆինանսավորման գործիքների իրականացման համար տրամադրեց սահմանաչափ:

- Համեմատաբար նոր զարգացման ուղղություններից կարելի է առանձնացնել հիփոթեքային վարկավորման բնագավառը, ուր Բանկը փաստացի մուտք գործեց 2010թ.-ին: Անդամակցումը «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրին ազգային արժույթով երկարաժամկետ հիփոթեքային վարկեր տրամադրելու հնարավորություն ընձեռեց: Նշված ծրագրի շրջանակում 2012թ. վերջին վերաֆինանսավորված վարկերի ծավալի աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 154.0%, իսկ հիփոթեքային վարկերի ընդհանուր պորտֆելը կազմել է ավելի քան 2,743.0 մլն ՀՀ դրամ, որը գերազանցում է նախորդ ժամանակաշրջանի ցուցանիշը 59.0%-ով, իսկ 2012թ. պլանային ցուցանիշը՝ 10.0%-ով:



## *Նոր վարկային ծառայություններ*

Վարկավորման համեմատաբար նոր ուղղություններից են Գնման պատվերի

ֆինանսավորման և Արտահանման խթանման ծրագրերը: Վերջիններս Բանկի ռազմավարական խնդիրների լուծման (կորպորատիվ հաճախորդների բազմակողմանի սպասարկում) գործիքակազմի էական տարրերից են և նոր` բավականին պահանջված ծառայություններ հայկական բանկային շուկայում: Նախորդ տարվա ընթացքում Բանկը վերը նշված երկու ծառայությունների գծով տրամադրել է շուրջ 2.0 մլն ԱՄՆ դոլար վարկ: Առաջիկա տարվա ընթացքում ակնկալվում է կրկնապատկել արդյունքները, մասամբ այն համատեղելով ՎԶԵԲ առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում ֆինանսավորմամբ: «Գնման պատվերի ֆինանսավորման ծրագիր» ծառայությունը նորություն չէ միջազգային շուկայում, սակայն տեղական շուկայում այն դեռևս լայն տարածում չի ստացել: Տվյալ ծառայության շրջանակներում Բանկը պատրաստակամություն է հայտնում ֆինանսավորել իր հաճախորդների այն գործարքները, որոնք միտված են առկա պատվերների կատարմանը: Ծառայության առավելությունը կայանում է նրանում, որ վարկի ստացման համար լրացուցիչ գրավադրում չի պահանջվում, և ապահովություն է հանդիսանում առկա մատակարարման կամ ծառայությունների մատուցման պայմանագիրը: Նմանատիպ գործարքների ռիսկայնությունը զսպելու նպատակով մատուցվող ծառայությունը հիմնականում զուգակցվում է առևտրի ֆինանսավորման այնպիսի գործիքների հետ, ինչպիսիք են ակրեդիտիվը, երաշխիքը, ապահովագրական գործիքները և այլն:



the ‘’National Mortgage Company” RCO CJSC which enabled the Bank to lend long term mortgage loans in local currency. As of year end 2012 loans refinanced within the scope of this program increased by about 154.0% compared to the previous year’s indicator. The Bank’s entire mortgage loans portfolio amounted to more than AMD 2,743.0 million, which exceeds the previous year’s indicator by about 59.0% and the planned indicator for 2012 by about 10.0%.

## *New lending products*

The Bank distinguishes Purchase order financing and Pre-export financing facilities as relatively new directions of lending which are important instruments for the Bank to achieve its strategic goals (offering full range of services to corporate clients) and well demanded new services in the Armenian banking market.

During the previous year the Bank disbursed about USD 2.0 million within the scope of its Purchase order financing and Pre-export financing facilities. For the coming year the results are expected to double with more financing also expected under EBRD’s Trade Facilitation Program.

Purchase order financing is not new in the international market however in the local market it is not widely used yet. Within the scope of this service the Bank is expresses willingness to finance such transactions of its clients that are directed to the fulfillment of existing orders. The main advantage of this service is that such financing does not require additional collateral since the existing contract of supplying goods or providing services itself servers as a collateral. To minimize risks related to this type of operations the Bank also provides such trade finance products as letter of credit, guarantee, insurance instruments, etc.



© Status Holding



*Հրազդան գետը բաժանում է Երևանը երկու  մասի: Որոշ պատմական աղբյուրների համաձայն՝ այս գետի վրա եղել է երեք կամուրջ՝ Քանաքեռի տարածքում, Ձորագյուղում և Կարմիր կամուրջը (վերջինս կանգուն է առ այսօր): Այժմ գետի վրա կարելի է տեսնել երեք հսկայական կամուրջ՝ Հաղթանակի (1945թ.), Կիևյան (1956թ.), Դավթաշենի (2000թ.): Այս կամուրջները մեծ դեր են խաղում քաղաքի կյանքում՝ իրար կապելով գետով իրարից անջատված թաղամասերը:*

*The Hrazdan River divides Yerevan into two parts. According to some historical documents, there were 3 bridges across this river in different times - in Kanaker, in Dzoragyugh and the Red Bridge, which one can see even today. Now there are 3 huge bridges across the Hrazdan - the Victory Bridge (1945), the Great Bridge of Hrazdan (1956), the Davtashen Bridge (2000). These bridges play a significant role in the urban life by connecting the isolated parts of the city to each other.*

# Ֆակտորինգ եվ առեվտրի ֆինանսավորման գործիքներ

# Factoring and trade finance

2012թ. Բանկին հաջողվեց ապահովել ֆակտորինգային գործարքների աննախադեպ աճ՝ պահպանելով շուկայում առաջատարի դիրքը: Այսպես, հաշվետու տարվա ընթացքում Բանկի կողմից իրականացված ֆակտորինգային գործարքների ծավալը կազմել է 11.4 մլրդ ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 112%-ով: Ինչ վերաբերում է տարվա ընթացքում ֆակտորինգային գործարքներից ստացված եկամտին, ապա այն նախորդ տարվա համեմատությամբ աճել է 127%-ով:

In 2012 the Bank made an unprecedented increase in factoring operations maintaining leading position in the market. During the reporting year factoring operations amounted to AMD 11.4 billion exceeding the previous year's amount by 112%. In the meantime income received on factoring operations increased by 127%.

**Ներքին ֆակտորինգով իրականցված գործարքների տարեկան ծավալները (մլրդ դրամ)**

**Annual turnover of domestic factoring (billion AMD)**



2012 թվականի ընթացքում Բանկը շարունակել է խորացնել համագործակցությունը գործող գնորդների և մատակարարների հետ, ինչպես նաև ներգրավել է նոր հաճախորդներ՝ ֆակտորինգի պորտֆելի հետագա դիվերսիֆիկացման նպատակով:

In 2012 the Bank continued cooperation with existing buyers and suppliers as well as attracted new clients to ensure further diversification of the factoring portfolio.



**Ֆակտորինգային պորտֆելի բաշխվածությունը՝ ըստ տնտեսության ճյուղերի**
**Structure of the factoring portfolio by sectors of the economy**




Առևտուր
Trade

Էներգետիկա
Energy

Սննդի արդյունաբերություն
Food industry

Շինարարություն
Construction

Բեռնափոխադրումներ
Cargo transportation

Թեթև արդյունաբերություն
Light industry

Այլ ճյուղեր
Other sectors



© Suren Manvelyan / Yerevan Productions



*«Կասկադի» հեղինակների՝ ճարտարապետներ Ջիմ Թորոսյանի, Սարգիս Գյուրզադյանի եւ Ասլան Մխիթարյանի ջանքերով իրագործվեց Թամանյանի՝ «Հյուսիսային ճառագայթը», որը հատում է քաղաքը հյուսիս-հարավ ուղղությամբ: Այսօր «Կասկադը» երևանցիների ամենասիրելի վայրերից մեկն է, որն ասես մի ամֆիթատրոն լինի՝ լիովին ձուլված շրջակա միջավայրի հետ: Նախագծի հեղինակներից մեկի խոսքերով՝ համալիրի գլխավոր գաղափարը ազգային վերածննդի արտահայտումն է:*

*With the help of architects J. Torosian, S. Gurzadyan and A. Mkhitaryan - the authors of the Cascade Complex - the project of “The Northern Ray” which crosses the city from North to South and which was planned by Tamanian, was realized. Today Cascade is like an amphitheatre, completely integrated with the surroundings. One of the authors of this project says that the main idea of the complex is the expression of the national rebirth.*

# Առեվտրի ֆինանսավորման այլ գործիքներ

## Other instruments of trade finance

2012թ. ընթացքում Բանկը շարունակել է ակտիվորեն կիրառել առևտրի ֆինանսավորման գործիքները: Բանկի կողմից իրականացվել է առևտրի ֆինանսավորում մոտ 8.5 մլն ԱՄՆ դոլարի չափով, նախորդ տարվա համեմատությամբ աճը կազմել է մոտավորապես 80%: Առևտրի ֆինանսավորման շրջանակներում Բանկն ակտիվորեն համագործակցում է ինչպես միջազգային կառույցների, այնպես էլ արտասահմանյան մի շարք բանկերի հետ՝ տարեց տարի ընդլայնելով համագործակցության աշխարհագրությունը: Ստորև ներկայացված ցուցանիշները վկայում են այն մասին, որ Բանկի հաճախորդներն ավելի հաճախ են օգտագործում առևտրի ֆինանսավորման գործիքները:

In 2012 the Bank continued intensive application of trade financing instruments. During the year the Bank's trade financing operations amounted to about USD 8.5 million exceeding the previous year's indicator by about 80%. Within the scope of trade financing the Bank actively cooperates both with international institutions and a number of foreign banks ensuring geographic expansion of cooperation year by year. The indicators presented below imply increased frequancy of using trade financing instruments by the Bank's clients.

Within the scope of international trade financing the Bank cooperates with the European Bank of Development and Reconstruction, Atlantic Forfaitierungs AG, and since 2012 also with Promsvyazbank. In 2012 the Bank has been quite active

**Միջազգային առևտրի ֆինանսավորման ծավալներ (մլն ԱՄՆ դոլար)**
**International trade financing turnover (million USD)**





ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Gevorg Khachatryan**

Հաճախորդների սպասարկման դեպարտամենտի տնօրեն

Director of Customer Service Department

in operations with internationl trade financing instruments. In particular, the Bank reported unprecedented increase within the scope of EBRD's Trade Facilitation Program. Since the Bank had completely disbursed EBRD's initial TFP limit of USD 3 million, EBRD increased the limit two times during the year by additional USD 3 million each time to amount USD 9 million.

Overall, in 2012 the Bank's trade financing operations amounted to around USD 8.5 million, which is around 80% more compared to the previous year.





© Suren Manvelyan



*Երևանի գրեթե բոլոր անկյուններից երևացող Արարատ լեռը հարաբերական բարձրությամբ աշխարհում ամենաբարձրն է. ստորոտից գագաթ նրա բարձրությունը կազմում է 4365 մ: Ընդ որում, հարկ է նշել, որ մեր տարածաշրջանում «Արարատ» անվանումը սկսել է տարածում գտնել միայն 19-րդ դարում, երբ ռուսերենը սկսեց կիրառվել տեղի ժողովուրդների կողմից: Մինչ այդ տարածված էր «Մասիս» անվանումը:*

*Mount Ararat which can be seen from almost all the corners of Yerevan is considered to be the highest mountain in the world by prominence: the distance between its summit and the lowest contour line encircling it is 4365 m. It is worth mentioning, that the usage of the name "Ararat" was determined by the fact that the Russian language became common among the locals in the 19th century. Formerly the name "Masis" was more prevalent.*

# Ներդրումային բանկային ծառայություններ
# Investment banking services

## Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխումներ

2012թ. ընթացքում կորպորատիվ արժեթղթերի առաջնային շուկայում Բանկի գլխավոր ձեռքբերումը կարելի է համարել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի 6,000,000 ԱՄՆ դոլար թողարկման ընդհանուր ծավալով, 10,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով 600 հատ ոչ փաստաթղթային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխումը: Բանկի ջանքերով Ընկերության դոլարային պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են: Բանկը հանդես եկավ որպես տեղաբաշխման կազմակերպիչ և հաշվարկային բանկ, ինչպես նաև մատուցեց պահառուական ծառայություններ: Ընդ որում, տեղաբաշխված պարտատոմսերի շուրջ 87.5 տոկոսը կամ 5,250,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական արժեքով պարտատոմսերը ձեռք են բերվել օտարերկրյա ներդրողների կողմից: Տեղաբաշխումն իրականացվել է բաց տեղաբաշխման միջոցով: Բանկի ջանքերով «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի տեղաբաշխված 600 հատ պարտատոմսերը ցուցակվում են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայում:

Բացի բուն տեղաբաշխման ծառայություններից Բանկը մատուցում է նաև «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի երկրորդային շուկայի ակտիվացման (իրացվելիության ապահովման) ծառայություններ` «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում իրականացնելով բաժնետոմսերի պարտադիր երկկողմանի գնանշումներ և հանդես գալով որպես ընկերության բաժնետոմսերի շուկա ստեղծող: 2012թ.-ի ընթացքում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջնորդությամբ ընկերության բաժնետոմսերով

## Corporate securities underwriting

In 2012 the Bank's major achievement in the primary market of corporate securities was the placement of "ARTSAKH HEK" OJSC's 600 non documentary nominal coupon bonds (nominal value of USD 10,000 and maturity of 36 months) for the total issued amount of USD 6,000,000. The Bank succeeded in allocating 600 foreign currency denominated bonds. The Bank acted as an underwriter and settlement bank as well as provided custody service. In fact, 87.5% of the placement (USD 5,250,000 in total nominal value) were purchased by foreign investors. The placement was implemented via open subscription. As a result of the Bank's efforts "ARTSAKH HEK" OJSC's 600 allocated bonds are listed at "NASDAQ OMX ARMENIA" stock exchange.

Besides the range of core underwritering services the Bank also ensures the liquidity of "ARTSAKH HEK" OJSC's shares in the secondary market making two-sided quatations in the "NASDAQ OMX ARMENIA" stock exchange and acting as a market maker for the Company. In 2012 the Bank intermediated 25 transactions with the Company's shares for an amount of AMD 126 million which account for 30% of the total exchange operations with shares. It is worth mentioning that in 2012 coporate bonds market came out of recession inactivity period as a result of official clarifications regarding limitations on the issuance of foreign currency denominated bonds which allowed issuance of this type of bonds. As a result 3 issuances where made in 2012.

## Dealing activity

In 2012 the Bank continued to actively implement operations

իրականացվել է 25 գործարք՝ շուրջ 126 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, ինչը կազմում է 2012թ. ընթացքում բաժնետոմսերով համախառն բորսայական գործարքների 30 տոկոսը: Հարկ է նշել, որ 2012թ. ընթացքում կորպորատիվ պարտատոմսերի շուկան դուրս եկավ ճգնաժամային պասիվության փուլից՝ շնորհիվ արտարժույթով արտահայտված պարտատոմսերի թողարկման հետ կապված օրենսդրական սահմանափակումների պաշտոնական պարզաբանման, որի արդյունքում պաշտոնապես թույլատրվեց նման պարտատոմսերի թողարկումը: Արդյունքում, 2012թ. ընթացքում կյանքի կոչվեց երեք թողարկում:

## Դիլերային գործունեություն

Բանկը 2012թ. ընթացքում շարունակել է ակտիվորեն իրականացնել ՀՀ պետական և կորպորատիվ արժեթղթերով գործառնություններ ներքին ֆինանսական շուկայում: Այսպես տարվա ընթացքում արժեթղթերի առաջնային շուկայում Բանկն իրականացրել է մոտ 12 մլրդ ՀՀ դրամ, իսկ երկրորդային շուկայում՝ մոտ 19 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով գործառնություններ: Նկատվել է կորպորատիվ պարտատոմսերով գործարքների ծավալի աճ, ինչը պայմանավորված է գործող և նոր թողարկումներով, մասնավորապես, «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի կողմից թողարկված երրորդ թողարկման բաժնետոմսերով իրականացված գործարքների աշխուժացմամբ, ինչպես նաև տարեվերջին «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի դոլարային պարտատոմսերի թողարկմամբ: Բանկը ՀՀ բաժնետոմսերի շուկայի զարգացմանը նպաստելու, ինչպես նաև «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի կողմից թողարկված բաժնետոմսերի իրացվելիության մակարդակի բարձրացման նպատակով 2012թ. ընթացքում ևս իրականացրել է այդ ընկերության բաժնետոմսերի երկկողմանի գնանշում՝ կնքելով 106,432 հատ բաժնետոմսերի (123,946,880 ՀՀ դրամի) առքուվաճառքի գործարքներ: Նախորդ տարվա համեմատությամբ այս ցուցանիշն աճել է 3.5 անգամ:

2012թ. ընթացքում Բանկը ներդրումային պորտֆելի համալրման նպատակով պետական պարտա-

with RA government and corporate securities in the domestic financial market.

During the reporting year the Bank's operations in the primary market amounted to about AMD 12 billion and about AMD 19 billion in the secondary market in nominal value. There was an increase in operations with corporate bonds explained by both existing and new issues particularly intensification of operations at NASDAQ OMX ARMENIA" OJSC with the third issue of "ARTSAKH HEK" OJSC's shares as well as new issue of "ARTSAKH HEK" OJSC's USD denominated bonds at the end of the year.

To promote the development of the RA stock market, and increase liquidity of "Artsakh HEK" OJSC's shares, in 2012 the Bank provided two-sided quotations for those shares implementing buy/sell transactions with about 106,432 shares (for the amount of AMD 123,946,880). Compared to the previous year, this indicator has increased 3.5 times.

To increase its investment portfolio the Bank purchased government securities for a nominal value of about AMD 9.0 billion from government securities initial allocation auctions in 2012. Regarding secondary market operations, the Bank sold bonds for AMD 4.5 billion more then the purchased amount. As a result, taking also into consideration the retirements of the bonds, the Bank's portfolio of government bonds increased by about AMD 2.3 billion in nominal value. Interest income on the bond portfolio increased by 18.0 percent as compared to 2011 results, amounting to AMD 2,076.0 million. In 2012 the Bank maintained its status of treasury bonds market agent.

In 2012 the Bank continued participating in foreign currency auctions at "NASDAQ OMX ARMENIA" OJSC stock exchange, implemented buy and sell operations totaling to about AMD 87.0 billion with the main convertible currencies in the interbank forex market. In 2012 the Bank continued the extensive use of foreign currency swaps, implementing transactions in the interbank market for around AMD 30.0 billion. During the reporting year, the Bank implemented swap transactions also with its clients amounting to AMD 1.7 billion.

In 2012 the Bank's operations with gold bullions decreased due to strong competition in this area. However, the Bank continues maintaining strong positions in this area of the RA financial system with a majority market share.

տոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդներից ձեռք է բերել ավելի քան 9.0 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պետական պարտատոմսեր, իսկ երկրորդային շուկայում Բանկը վաճառել է 4.5 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով ավելի շատ պարտատոմսեր, քան գնել էր: Արդյունքում, հաշվի առած նաև պարտատոմսերի մարումները, 2012թ. Բանկի պետական պարտատոմսերի պորտֆելի անվանական ծավալն աճել է մոտ 2.3 մլրդ ՀՀ դրամով: Պարտատոմսերի պորտֆելից Բանկի ստացած տոկոսային եկամուտը 2011թ. համեմատությամբ աճել է ավելի քան 18.0% և կազմել է 2,076.0 մլն ՀՀ դրամ: Բանկը 2012թ. պահպանել է պետական պարտքի կառավարման գծով ՀՀ կառավարության գործակալի կարգավիճակը: Բանկի ներդրումային պորտֆելի կառուցվածքը և ստացված եկամուտի դինամիկան ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

During the year the Bank implemented buy and sell transactions with precious metals for around AMD 7.5 billion. In 2012 the Bank also continued opening and serving unallocated metal accounts for its clients.

ARMSWISSBANK provides quotations for AMD and major currencies, RA government and corporate securities, foreign currency forwards, interbank deposits and repurchase agreements at the official page of the Bank at Bloomberg information system.

The Bank is active both in RA (attracting and allocating short and medium term deposits and loans) and international money markets, making deposits with leading foreign banks. Overall deposits and loans amounted to AMD 3.5 billion and AMD 85.0 billion respectively.

**Ներդրումային պորտֆելի կառուցվածքը և եկամտաբերության մակարդակը (հազար ՀՀ դրամով)**

**The Structure and Income Dynamics of the Bank’s Investment Portfolio (thousand AMD)**



Տարվա ընթացքում Բանկը շարունակել է մասնակցել «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում իրականացվող արտարժույթի առք ու վաճառքի սակարկություններին, հանդես է եկել միջբանկային արտարժութային շուկայում՝ իրականացնելով միջազգային հիմնական փոխարկելի արժույթներով առք ու վաճառքի գործառնություններ, որոնց ընդհանուր ծավալը կազմել է մոտ 87.0 մլրդ ՀՀ դրամ: 2012թ. Բանկը շարունակել է կիրառել արտարժութային սվոփ գործիքը, որի գծով հաշվետու տարվա ընթացքում միջբանկային շուկայում Բանկն իրականացրել է շուրջ 30.0 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով գործառնություններ:



## ԿԱՐԵՆ ՏՈՒՐՅԱՆ
**Karen Turyan**

Գործադիր տնօրենի տեղակալ - Ներդրումային դեպարտամենտի տնօրեն

Deputy Executive Director - Director of Investment Department

Հատկանշական է նաև այն, որ հաշվետու տարվա ընթացքում Բանկն իր հաճախորդների հետ նույնպես իրականացրել է սվոփ գործարքներ, որոնց ծավալը 2012թ. ընթացքում կազմել է 1.7 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի կողմից 2012թ. կնքված ոսկու ճոլակտոր-ներով գործառնությունների ծավալները նվազել են, ինչն այս ոլորտում ձևավորված ուժեղ մրցակցության արդյունք է: Չնայած դրան Բանկը շարունակում է պահպանել ՀՀ ֆինանսական համակարգի այս ոլորտում ձեռք բերած իր կայուն դիրքը և ապահովել ՀՀ բանկային համակարգում նշված գործառնությունների գծով ծավալների գերակշիռ մասը:

Տարվա ընթացքում Բանկի կողմից իրականացվել է շուրջ 7.5 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով թանկարժեք մետաղներով առք ու վաճառքի գործառնություններ: Հարկ է նշել նաև, որ 2012թ. Բանկն իր հաճախորդներին շարունակել է մատուցել առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և վարման ծառայություններ:

Բանկն իրականացնում է ՀՀ դրամի և հիմնական արտարժույթների, ՀՀ պետական և կորպորատիվ արժեթղթերի, արտարժութային ֆորվարդային գործիքների, միջբանկային ավանդային և ռեպո գործառնությունների տոկոսադրույքների գնանշում Bloomberg տեղեկատվական համակարգում՝ Բանկի պաշտոնական էջում:

2012թ. Բանկը շարունակել է ակտիվ գործունեություն ծավալել ինչպես ՀՀ տարածքում՝ բանկերում տեղաբաշխելով և ներգրավելով կարճաժամկետ ու միջնաժամկետ դեպոզիտներ և վարկեր, այնպես էլ միջազգային փողի շուկայում՝ ներդնելով դեպոզիտներ արտասահմանյան առաջնակարգ բանկերում: Դեպոզիտների և վարկերի ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ կազմել է համապատասխանաբար 3.5 մլրդ և 85.0 մլրդ ՀՀ դրամ:

## *Բրոքերային գործունեություն*

Բանկի ռազմավարական ուղղություններից է մի-

## *Brokerage activity*

Investment banking including brokerage services is considered one of the Bank's main strategic activities and is carried out in accordance with international standards. Within the scope of brokerage activities the Bank offers its clients a wide variety of investment instruments, such as shares and depository receipts of American, European and Russian companies, government and corporate securities, commodity futures, repo operations with foreign securities and marginal operations.

During the reporting year the number of the Bank's brokerage clients increased by about 10% compared to 2011. Transactions were made with shares and depository receipts of leading companies at Russian, European and American stock exchanges. The total number of brokerage transactions implemented upon the orders of the Bank's clients during 2012 was 695 for an amount of AMD 5.05 billion. Major part of this amount, namely AMD 4.96 billion is attributed to the brokerage transactions with foreign securities.

In 2012 the Bank also had active participation in the auctions at corporate securities platforms of the "NASDAQ OMX ARMENIA" OJSC.

In 2012 the Bank continued to offer its clients repo agreements with foreign securities, operations with which amounted to AMD 942.0 million.

In 2012 the Bank continued marginal transactions with foreign securities which assumes additional financing to the clients to purchase securities. As a result, the Bank's clients implemented marginal transactions for an amount of AMD 460.0 million during the year.

ջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների, այդ թվում՝ արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցումը: Բանկն իր բրոքերային գործունեության շրջանակներում հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսականի՝ ամերիկյան, եվրոպական և ռուսական ընկերությունների բաժնետոմսեր ու դեպոզիտար ստացականներ, պետական և կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ֆյուչերսներ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո գործառնություններ ու մարժինալ գործարքների կնքման հնարավորություն:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկի բրոքերային հաճախորդների թիվը 2011թ. համեմատությամբ աճել է մոտ 10%: Գործարքներ են կնքվել ռուսական, եվրոպական և ամերիկյան բորսաներում շրջանառվող առաջատար ընկերությունների բաժնետոմսերով և դեպոզիտար ստացականներով: Ընդհանուր առմամբ, 2012թ. ընթացքում Բանկի հաճախորդների հանձնարարականների հիման վրա իրականացվել են թվով 695 բրոքերային գործարքներ՝ 5.05 մլրդ ՀՀ դրամին համարժեք ընդհանուր ծավալով: Վերոնշյալ ծավալի գերակշիռ մասը՝ 4.96 մլրդ ՀՀ դրամ, բաժին է ընկել օտարերկրյա արժեթղթերով իրականացված բրոքերային գործարքներին:

2012թ. ընթացքում Բանկն ակտիվ մասնակցություն է ունեցել նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի կորպորատիվ արժեթղթերի հարթակներում իրականացվող սակարկություններին:

2012թ. ընթացքում Բանկն իր հաճախորդներին շարունակել է առաջարկել օտարերկրյա արժեթղթերով ռեպո գործարքներ, որոնցով իրականացված գործառնությունների ծավալը տարվա ընթացքում կազմել է 942.0 մլն ՀՀ դրամ:

2012թ. Բանկն իր հաճախորդներին շարունակել է մատուցել օտարերկրյա արժեթղթերով մարժինալ գործարքների կնքման ծառայություններ, ինչը ենթադրում է հաճախորդներին լրացուցիչ ֆինանսավորման տրամադրում՝ արժեթղթեր ձեռք բերելու նպատակով: Արդյունքում տարվա ընթացքում Բանկի հաճախորդներն իրականացրել են 460.0 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով մարժինալ գործարքներ:




© Mariam Loretsyan / Yerevan Productions



*Հանրապետության հրապարակը Երևանի սիրտն է: Այստեղ են գտնվում Կառավարական տունը, նախարարություններ, Հայաստանի ազգային պատկերասրահը, Հայաստանի պատմության թանգարանը, խոշոր հյուրանոցային համալիր... Անսամբլի բոլոր շենքերը կառուցված են սպիտակ և վարդագույն տուֆով: Հրապարակի կենտրոնում կարելի է տեսնել օվալաձև խճանկար, որը հիշեցնում է ավանդական հայկական գորգ:*

*Republic Square is the heart of Yerevan. The Government House, several ministries, the National Gallery of Armenia, the History Museum of Armenia, a large hotel are all located here. All the buildings of the ensemble are made of rose and white tufa stones. In the centre of the Square one can see an oval shaped mosaic which resembles a traditional Armenian carpet.*

# Մարքեթինգ

## Marketing

2012թ. Բանկն ակտիվացրել է մարքեթինգային միջոցառումները ինչպես գործող, այնպես էլ նոր ծառայությունների առաջմղման մասով:

2012թ. նախաձեռնվել և իրականացվել են լայնածավալ աշխատանքներ Բանկի տնային էջի բարելավման և այն հանրությանն էլ ավելի մատչելի դարձնելու ուղղությամբ, ինչի արդյունքում ավելացել են կայքի ֆունկցիոնալ հնարավորությունները և կայքը դարձել է էլ ավելի ինֆորմատիվ և գրավիչ: Բանկը պարբերաբար իրականացնում է մարքեթինգային վերլուծություններ՝ ուսումնասիրելով ՀՀ բանկային շուկան և մրցակիցների ծառայությունները, սակագները, որի արդյունքում մշակում է իր սակագնային քաղաքականությունը:

Իրականացվել են աշխատանքներ Բանկի նպատակային խմբերի հետ, որն ուղղված է եղել հաճախորդների չբացահայտված կարիքների բացահայտմանը, հաճախորդների հետ արդյունավետ հակադարձ կապի ապահովմանը, փրայվիթ բանկային ծառայությունների աստիճանական ներդրմանը, սպասարկման նոր տեխնոլոգիաների կիրառմանը, առկա հաճախորդներից յուրաքանչյուրին մատուցվող ծառայությունների դիվերսիֆիկացմանը: Նոր հաճախորդների ներգրավման նպատակով շարունակվել է «դայրեքթ մարքեթինգ»-ի արդյունավետ կիրառումը:

Պոտենցիալ հաճախորդների բացահայտման և հանրության իրազեկվածության բարձրացման նպատակով Բանկում կազմակերպվել են տարբեր սեմինարներ, թրեյնինգներ:

In 2012 the Bank intensified activities towards the promotion of both existing and new products.

In 2012 the Bank implemented activities to improve its web page adding new functions and making the web page more informative and attractive. The Bank periodically implements marketing researches, studying the RA banking market, services offered by the competitors, fees and interest rates and as a result develops its own tariff policy.

The Bank carried out activities among the target groups of clients, which were directed to reveal the unrecognized needs of clients, ensure effective feedback, gradually introduce private banking services, apply new technologies of providing services, diversify the services provided to each of the Bank's clients. The Bank continued to apply the method of "direct marketing" to attract new clients.

Seminars and trainings were held in the Bank to increase public recognition and promote attraction of new clients.





ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ

**Hayk Mkrtchyan**

Բիզնեսի զարգացման դեպարտամենտի տնօրեն

Director of Business Development Department



© Vahan Stepanyan / PanARMENIAN Photo




*Հանրապետության հրապարակում տեղակայված Կառավարական տան ժամացույցը կարելի է անվանել Հայաստանի ամենակարևոր ժամացույցը: Այն պատրաստվել է Մոսկվայում, իսկ Երևան է տեղափոխվել 1941 թվականին: Ժամացույցի մեծ սլաքի երկարությունը 188 սմ է, փոքրինը՝ 170 սմ: Թվատախտակի տրամագիծն էլ 4 մետր է, ինչի շնորհիվ ժամացույցը տեսանելի է քաղաքի տարբեր մասերից:*

*The clock of the Government House which is situated in Republic Square may be regarded as the most important clock in Armenia. It was produced in Moscow and was brought to Yerevan back in 1941. Its hour hand is 188 cm long and the minute hand is 170 cm long. The clock dial is 4 m in diameter which allows the clock to be seen from different parts of Yerevan.*

# Տեղեկատվական տեխնոլոգիաներ

## Information technologies and security

Բանկն իր գործունեության հենց սկզբից կարևորել է տեխնիկական համապատասխան հագեցվածության և տեղեկատվական ապահովման հարցերը ու շարունակական աշխատանքներ է տանում նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: Բանկն անդամակցում է մի շարք տեղական և միջազգային վճարային և տեղեկատվական համակարգերի:

2012թ. Բանկն անվտանգության բարձրացման նպատակով՝ շարունակել է իրականացնել մի շարք միջոցառումներ առաջնորդվելով միջազգայնորեն ընդունված COBIT, ISO 27001, ISO 17799 ստանդարտներով:

Տեղադրվել են անվտանգության DMZ համակարգեր: Ներքին ցանցն ավելի ապահով ու կառավարելի դարձնելու նպատակով ներդրվել են մի շարք մոնիտորինգային (SYSLOG) համակարգեր: Այդ ամենն ուղված է բարձրացնելու Բանկում առկա համակարգերի անխափան աշխատանքը:

Բանկում առկա է երկու  առանձին սերվերային սենյակ, որոնք ապահովում են սերվերների պահուստային աշխատանքի անխափանությունը:

Բանկում գործում է ՀԾ-Ինտերնետ-Բանկ համակարգը, որը հնարավորություն է տալիս Բանկի հաճախորդներին հեռահար սպասարկվել Բանկում: Այն թույլ է տալիս աշխարհի ցանկացած կետից և ցանկացած պահի,  առանց բանկ այցելելու ինտերնետի միջոցով՝ առանց մեծ ծախսերի, ապահով և անվտանգ, օգտվել բանկային հիմնական ծառայություններից: Ինտերնետ կայքի անվտանգությունն ապահովելու նպատակով տեղադրվել են միջազգայնորեն հայտնի VeriSign կազմակերպության սերտիֆիկատները:

2012թ. Բանկի ինտերնետային կայքի (www.armswissbank.am) միջոցով հնարավոր է

From the very beginning the Bank has emphasized the importance of sound technical and information support constantly introducing new technologies. The Bank  has joined a number of local and international payment and information systems.

In 2012 guided by the international COBIT, ISO 27001, ISO 17799 standards the Bank implemented a number of activities to increase security.

In 2012 DMZ security systems were installed. To make local networks more secure and manageable certain monitoring systems (SYSLOG) were installed.  All of the abovementioned activities are aimed to increase the consistency of the systems operating in the Bank.

There are 2 separate server rooms in the Bank that ensure the continuity of the servers' reserve work.

The AS Internet Bank system operates in the Bank, which allows the Bank's customers to remotely use the Bank's main services, that is, via the internet, from any place, at any time without visiting the Bank and without significant expenses. To ensure the security of the Bank's web site the certificates of the globally recognized VeriSign company are applied.

In 2012 the Bank offered its clients the opportunity of opening online bank accounts and implementing brokerage operations via the Bank's website: www.armswissbank.am.

The Bank will continue expanding the range of services provided by the "Bank-Client" on line system matching them to the needs of the Bank and its clients as well as improving the new "Internet Banking" system.

դարձել օնլայն տարբերակով բացել բանկային հաշիվ և օգտվել Բանկի բրոքերային ծառայություններից:

Բանկը շարունակելու է ընդլայնել ներդրված բանկային ծառայությունների մատուցման առցանց «Բանկ-Հաճախորդ» համակարգի միջոցով մատուցվող ծառայությունները` համապատասխանեցնելով դրանք Բանկի և Բանկի հաճախորդների պահանջներին, ինչպես նաև կատարելագործելով «Ինտերնետ-Բանկինգ» համակարգը:





© Status Holding



*Հրազդան գետը Հայաստանի խոշորագույն գետերից է: Դրա երկարությունը 141 կմ է: Այն սկիզբ է առնում Սևանա լճից 1900 մ բարձրության վրա և թափվում է Արաքս գետը: Գետը կարևոր դեր է խաղում երկրի կյանքում. դրա վրա է կառուցված երեք հիմնական հիդրոէլեկտրակայաններից մեկը՝ Սևան-Հրազդան ՀԷԿ-երի համալիրը:*

*The Hrazdan River is one of the major rivers in Armenia. Its length is 141 km. It starts from Lake Sevan at 1900 m above the sea level and joins the Araks River. The river plays an important role in the country's life as one of the 3 main operating hydropower plants in Armenia - Sevan-Hrazdan Cascade - is situated over it.*

# Ռիսկերի կառավարում

## Risk management

Բանկի կառավարման մարմինները մշտապես կարևորել են Բանկի ռիսկերի արդյունավետ և անընդհատ կառավարումը: Բանկի Խորհուրդը, Գործադիր տնօրենը, Տնօրինությունը, ինչպես նաև Բանկի յուրաքանչյուր աշխատակից ընդգրկված են ռիսկերի կառավարման գործընթացում: Ռիսկերի վերլուծությունը կազմում է Բանկի ռազմավարական պլանավորման գործընթացի, ինչպես նաև կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի գնահատման և ներդրման մի մասը:

Ռիսկերի կառավարման գործընթացը կանոնակարգում է Բանկի Խորհուրդը, որը որդեգրած քաղաքականության շրջանակներում հաստատում է սահմանաչափեր, ուղենիշներ, ներդրումային ուղեցույցներ, վարկառուների և գործընկերների ընտրության չափանիշներ, գրավների նկատմամբ պահանջներ և այլն, որոնք սահմանափակում են Բանկի վարկային, շուկայական և այլ ռիսկերը: Բանկում գործում են խորհրդատվական և որոշումներ կայացնող կոլեգիալ մարմիններ՝ Տնօրինություն, Վարկային, Ներդրումային, Ակտիվների և պարտավորությունների կառավարման, Գործունեության համապատասխանության հսկման և Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման կոմիտեներ:

Ռիսկերի զսպմանն ու արդյունավետ կառավարմանն ուղղված շարունակաբար իրականացվող աշխատանքների շրջանակներում 2012թ. Բանկի կառուցվածքում Խորհրդի կողմից իրականացվել և 01.01.2013թ.-ից ուժի մեջ են մտել փոփոխություններ, համաձայն որոնց Վարկավորման դեպարտամենտի գործառույթներից առանձնացվել են վերջինիս կողմից տրամադրվող վարկային գործիքների մոնիթորինգի և որակի հսկողության գործառույթները: Ձևավորվել է Ռիսկերի կառավարման նոր դեպարտամենտ, որում ընդգրկվել են նշված գործառույթներն իրականացնող Մոնիթորինգի և որակի հսկողության բաժինը և

The Bank's management has always prioritized the effiency and consistancy of risk management mechanisms. The Bank's Board, the Management Board, the Executive Director as well as each employee of the Bank are involved in the risk management process. Risk analysis is a vital component of the Bank's strategic planning process as well as the assessment and implementation of short and medium term projects.

The risk management process is regulated by the Board, which establishes limits, benchmarks, investment guidelines, criteria of selecting borrowers and partners, collateral requirements, etc., which reduce the Bank's exposure to credit, market and other risks.

Collective decision-making and consultative bodies operate in the Bank, namely, the Management Board, Credit, Investment, Assets and Liabilities Management, Compliance and Client Relations Management committees.

Within the scope of continuous activities towards credit risk mitigation and effective management, the Board made some structural changes in 2012 (effective since 01.01.2013) according to which functions of monitoring and quality control of lending instruments are separated from the lending department and the Monitoring and quality control division implementing the said functions together with the Risk management division comprise the new Risk Management Department. The Department is independent from operational units and exercises daily and periodic control over the Bank's operations through examining higher risk transactions and monitoring the compliance with the internal normatives of the Bank as well as with the limits and benchmarks set by the Supervisory Board and the Management Board.

An effective system of credit, market, liquidity and operational risk management is applied in the Bank based on modern methods and technologies of risk assessment and mitigation. The Bank periodically reviews the existing guidelines, approved limits and credit risk assessment guidlines adjusting them to



## ԳՐԻԳՈՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ
## Grigor Movsisyan

Գործադիր տնօրենի տեղակալ - Ռիսկերի կառավարման դեպարտամենտի տնօրեն

Deputy Executive Director - Director of Risk Management Department

Ռիսկերի կառավարման բաժինը: Դեպարտամենտն անկախ է գործարքներն իրականացնող ստորաբաժանումներից և իրականացնում է ինչպես ընթացիկ, այնպես էլ պարբերական հսկողություն Բանկի կողմից իրականացված գործառնությունների նկատմամբ` ուսումնասիրելով առավել ռիսկային գործարքները, հետևելով և համապատասխանեցնելով Բանկի ներքին նորմատիվային դաշտին, Խորհրդի և Տնօրինության կողմից հաստատված սահմանաչափերին և նպատակային ցուցանիշներին:

Բանկում մշակված և ներդրված է վարկային, շուկայական, իրացվելիության և գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ` հիմնված ռիսկերի գնահատման և զսպման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների վրա: Բանկը պարբերաբար վերանայում է ներդրումային ուղենիշների գործող ուղեցույցը, հաստատված սահմանաչափերը և վարկային ռիսկի գնահատման մեթոդական ուղեցույցները` դրանք համապատասխանեցնելով միջազգային և տեղական ֆինանսական շուկաներում տիրող իրավիճակին: Բանկին բնորոշ ռիսկերի ուսումնասիրության նպատակով պարբերաբար կիրառվում են սթրես-թեստերի մոդելներ: Արտարժութային ռիսկը հեջավորվում է արտասահմանյան գործընկերների կողմից տրամադրվող գործիքակազմի միջոցով, ածանցյալ գործիքների համար սահմանվում են սահմանաչափեր` համաձայն Բանկում գործող կարգի: Տոկոսադրույքի ռիսկի գնահատման համար կիրառվում է տոկոսադրույքի ռիսկի կառավարման հիմնական տարրերից մեկը` ժամկետայնության ճեղքվածքի (GAP) մոդելը:

Գործառնական ռիսկերի կառավարման նպատակով պարբերաբար ուսումնասիրվում և բարելավվում են որոշումների կայացման և վերահսկման գործընթացները: Հնարավոր կորուստները ծածկելու նպատակով Բանկը ձեռք է բերել ապահովագրական փաթեթներ (բանկային ռիսկերի համապարփակ ապահովագրություն (BBB), շենքի և գույքի ապահովագրություն):

Իրավական ռիսկի կառավարման համար Բանկում գործում է համապատասխանության (compliance) գործառույթն իրականացնող կոմիտե, որն արագ



արձագանքում է բանկային համակարգում տեղի ունեցող իրավական և այլ փոփոխություններին և տեղեկացնում է Բանկի ղեկավարությանն ու համապատասխան ստորաբաժանումներին:

Բանկը միջազգայնորեն ընդունված սկզբունքներով իրականացնում է պայքար փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ` համակողմանիորեն ուսումնասիրելով Բանկի հաճախորդներին, գործընկերներին և շահառուներին:



the situation of local and international financial markets. Stress test models are periodically exercised for observing the risks typical of the Bank. The instruments available from foreign partners are used to hedge the foreign currency risk and limits are defined for derivatives according to the regulation enforced in the Bank. One of the key elements of interest rate risk management, namely the maturity GAP model, is applied for the assessment of interest rate risk.

For the puprose of managing operational risk, decision making and control procedures are periodically studied and improved. To cover possible loss the Bank has acquired insurance packages, namely, the BBB (Bankers Blanked Bond) and Building and Property insurance policies.

To manage legal risks a committee ensuring the compliance function operates in the Bank which quickly responds to legal and other changes in the banking sector and immediately informs the Bank’s management and relevant units.

The Bank implements detailed examination of its clients, partners and beneficiaries within the framework of its Anti-Money Laundering and Counter-Terrorism Financing policy based on international standards.



© PhotoStock.am



*1927թ. Երևանի պետական կոնսերվատորիայի տնօրեն Ա. Տեր-Ղևոնդյանի նախաձեռնությամբ հիմնվեց օպերային ստուդիան: Դրա հիման վրա 1932թ. Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց հիմնադրել Ազգային օպերային թատրոնը, որը բացվեց 1933թ.-ի հունվարին՝ Ա.Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ներկայացմամբ: Թատրոնը ստացավ իր՝ Ա. Թամանյանի կողմից նախագծված շենքը 1940 թվականին:*

*Back in 1927 the director of the Yerevan State Conservatory A. Ter-Ghevondyan established the opera studio. Several years later, in 1932, the Government of Armenia founded the National Opera Theater. The first performance here - A. Spendiaryan's "Almast" opera - was held in January, 1933. The theater moved to its own building, designed by A. Tamanian, in 1940.*

# Ներքին աուդիտ
## Internal audit

Բանկի Ներքին աուդիտն իրականացնում է Բանկի գործունեությանն առնչվող ռիսկերի նվազեցման և կանխարգելման նպատակով ձևավորված ներքին հսկողության մեխանիզմների բավարարության և արդյունավետության գնահատում: Ներքին աուդիտի կողմից իրականացվում է նաև Բանկի գործունեության՝ Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ կենտրոնական բանկի և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխանության ստուգում:

Ներքին աուդիտն իրականացնում է ինչպես ծրագրային ստուգումներ Բանկի խորհրդի կողմից հաստատված Ներքին աուդիտի տարեկան աշխատանքային ծրագրի հիման վրա, այնպես էլ արտածրագրային ստուգումներ իր նախաձեռնությամբ: Ներքին աուդիտն իր աշխատանքների իրականացման շրջանակում ակտիվորեն համագործակցում է Բանկի կառավարման մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

Ներքին աուդիտի կողմից 2012 թվականի ընթացքում ամբողջությամբ իրականացվել են Բանկի խորհրդի կողմից հաստատված ծրագրային միջոցառումները:

The Internal Audit evaluates whether the internal control mechanisms for the reduction and prevention of the risks related to the Bank's activity are sufficient and effective as well as monitors the complicance of the Bank's activity to the RA legislation, legal requirements of the CBA and internal regulations of the Bank.

The Internal Audit carries out both planned examinations according to its annual work plan approved by the Bank's Board and initiates examinations at its own discretion. The Internal Audit closely cooperates with the Bank's governing bodies and structural units.

In 2012 the Internal Audit has completed all of the planned activities approved by the Bank's Board.






© Status Holding



*Երևանի ամենահայտնի տեսարժան վայրերից մեկը Մատենադարանն է. ձեռագրերի և միջնադարյան գրքերի՝ աշխարհի ամենախոշոր հավաքածուներից մեկի պահպահման և հետազոտական կենտրոններից մեկը: Մատենադարանի շենքի կառուցումը սկսվել է 1945 թ.-ին և ավարտվել 1957 թ.-ին: Նախագծի ճարտարապետն է Մարկ Գրիգորյանը:*

*One of the most visited attractions in Yerevan is Matenadaran - a repository and research centre of a huge collection of manuscripts and medieval books. The construction of the building began in 1945 and was completed by 1957. The author of the project is architect Mark Grigoryan.*

# Անձնակազմի կառավարման քաղաքականություն

# Human resource management

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի հաջողության գաղտնիքն ու զարգացման հիմնաքարն են հանդիսանում առաջադեմ և փորձառու մասնագետները, ովքեր հավատարիմ են Բանկի նպատակներին և որդեգրած քաղաքականությանն, աչքի են ընկնում իրենց հմտություններով, պրոֆեսիոնալիզմով և թիմային աշխատանք իրականացնելու ունակություններով: Եվ հենց նրանց հմուտ աշխատանքի շնորհիվ է, որ հաջողվում է բացահայտել բիզնեսի զարգացման նոր հորիզոններ և ստեղծել Բանկի հաճախորդների համար լավագույն պայմաններ:

Հավատարիմ մնալով Անձնակազմի կառավարման որդեգրած քաղաքականությանը, Բանկը շարունակել է հոգ տանել իր աշխատակիցների մասին՝ նրանց համար ստեղծելով բոլոր անհրաժեշտ պայմանները մասնագիտական աճի, նոր գիտելիքների ձեռք-բերման, նոր հմտությունների տիրապետման, ինչպես նաև սոցիալական պաշտպանվածության և բարեկեցության համար:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս Բանկը շեշտադրում է կատարել աշխատակիցների ուսուցման, վերապատրաստման և որակավորման բարձրացման գործընթացի վրա: 2012թ. ընթացքում Բանկի 40 աշխատակից մասնակցեցին 58 սեմինարի, պրեզենտացիաի, կոնֆերանսի և դասընթացի ՀՀ տարածքում, արտասահման գործուղվեցին 5 աշխատակից՝ մասնակցելու արտասահմանյան կոնֆերանսների և վերապատրաստումների, ինչպես նաև Բանկի աշխատակիցները կազմակերպել են 22 ներքին սեմինար, որոնք փորձի, գիտելիքների, գաղափարների և կարծիքների փոխանակման հնարավորություն են ընձեռել:

Շարունակվել է նաև ACCA որակավորման

The secret and cornerstone of ARMSWISSBANK's success lies in its team of leading and experienced employees who are loyal to the Bank's objectives and adopted policy and stand out for their skills, professionalism and ability to perform effective teamwork. Their proffessional work makes it possible to discover new horizons of business development and offer best terms to the Bank's clients.

Remaining loyal to the its Human Resource Management Policy the Bank continued creating all necessary conditions for the employees' professional growth, acquisition of new skills and knowledge, as well as for social security and welfare.

As in previous years, the Bank continued prioritizing the continuous training of its personnel and professional development.

In 2012 40 employees of the Bank participated in 58 seminars, presentations and conferences in the Republic of Armenia and 5 employees participated in conferences and trainings abroad. Furthermore, 22 internal seminars were held in the Bank by the employees promoting exchange of experience, knowledge, ideas and opinions.

The process of organizing employees' participation to the successive levels of ACCA examinations continued and 7 employees received subsequent ACCA qualifications. Also one employee received the respective qualification by the GARP (Global association of Risk Professionals) Risk certification program. In 2012 two employees of the Bank successfully took the exams of the training program in trade finance (e-learning) organized jointly by EBRD and the International Chamber of Commerce (ICC).

Attaching great importance to exchange of international practice, a leading specialist invited from EBRD periodically

